

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՄԻ ՇԱՐՔ  
ԽՆԴԻՐՆԵՐ ՖՀՄՍ-ՆԵՐԻ ԱՆՑՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ**

**ԱՆԻ ՍԵՐՈՐՔՅԱՆ**

ՀՊՏՀ ֆինանսական հաշվառում ամբիոնի հայցորդ

Բանալի բառեր. ֆինանսական հաշվառում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՀՄՍ), հաշվային պլան


ՀՀ-ում հաշվապահական հաշվառման բարեփոխման նախադրյալները ձևավորվել են շուկայական տնտեսությանն անցման զուգահեռ: «Հաշվապահական հաշվառման» մասին ՀՀ օրենքը ընդունվել է 1998թ-ի մայիս ամսին, որն էլ հանդիսացավ արմատական փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ նախադրյալը: Այնուհետև ՀՀ կառավարությունը 26 նոյեմբերի 1998 թվականի «Հաշվապահական հաշվառման համա-կարգի բարեփոխումների մասին» N740 որոշմամբ հաստատեց<sup>1</sup>, որ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները մշակվում են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների կոմիտեի կողմից հրապարակված հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների հիման վրա: Այս որոշումը շատ կարևոր դեր ունեցավ, քանի որ հանդիսացավ բարեփոխումների հիմքը: Այնուհետև 2002 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունվեց «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառում կազմակերպելու և վարելու, ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվություններ (այսուհետ՝ ֆինանսական հաշվետվություններ) կազմելու և ներկայացնելու միասնական հիմունքները, կարգավորում է հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ հարաբերություններ: Այն նպատակ էր հետապնդում նաև գործող հաշվապահական հաշվառման մոտեցումները առավելագույնս համապատասխանեցնել ՀՀՄՍ-ների պահանջներին:

Ներկայումս ՀՀ-ում ակտիվ աշխատանքներ են ընթանում ֆինանսական հաշվառման համակարգի կատարելագործման ուղղությամբ: Խոսքը, մասնավորապես, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների) անցման ուղղությամբ կատարվող քայլերի մասին է: Այս ստանդարտների մշակմամբ զբաղվում է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ), որն անկախ, մասնավոր աղբյուրներից ֆինանսավորվող հաշվապահական ստանդարտներ մշակող կազմակերպություն է: ՀՀՄՍԽ-ի գրասենյակը Լոնդոնում է: Խորհրդի մշակած

<sup>1</sup> «Հաշվապահական հաշվառման համակարգի բարեփոխումների մասին» N740 որոշում, 26.11.1998թ.

ստանդարտները ողջ աշխարհին հայտնի են IFRS (International financial reporting standards) անվանումով: Սկսած 2005թ՝ Եվրոմիության սահմաններում գրանցված բոլոր էմիտենտ ընկերությունները պետք է կազմեն իրենց կոնսոլիդացված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ներին համապատասխան<sup>2</sup>: Յուրաքանչյուր երկիր այժմ արդեն կարող է հաշվի առնել այս ստանդարտների գոյության փաստը, քննարկել դրանք տեղի շահառուների հետ և որոշել, թե արդյո՞ք այն կիրառելի է տվյալ երկրում, և ե՞րբ է հնարավոր դրա ներդրումը: Յուրաքանչյուր երկիր նաև ինքը կընտրի, թե որ կազմակերպությունների համար են կիրառելի նոր ստանդարտները<sup>3</sup>:

**ՖՀՄՍ-ների անցման ճանապարհին առաջացող մի շարք խնդիրներ և առաջարկվող լուծումներ. ՖՀՄՍ-ին անցնելու ամսաթիվ.** ՖՀՄՍ-ներին անցման ամսաթիվն այն ամենավաղ ժամանակաշրջանի սկիզբն է, որի համար կազմակերպությունը ՖՀՄՍ-ներին համապատասխան պատրաստվող իր առաջին ֆինանսական հաշվետվություններում ներկայացնում է ամբողջական համադրելի տեղեկատվություն համաձայն ՖՀՄՍ-ների: Ընկերությունը պետք է համադրելի տեղեկատվություն ներկայացնել ավելի քան մեկ տարվա համար, այսինքն՝ ոչ միայն 2014թ., այլ նաև, օրինակ, 2013 թվականի համար<sup>4</sup>: Ակտիվների և պարտավորությունների ճանաչման տեսական դրույթների մատչելիության բարձրացման նպատակով առաջարկում ենք կիրառել գծապատկեր 1-ում ներկայացված քայլերի հաջորդականությունը




**Գծապատկեր 1.** Ակտիվների և/կամ պարտավորությունների ճանաչումը, չափումը և դասակարգումը

<sup>2</sup> ACCA paper F7 (financial reporting) published by BPP Learning Media, UK 2009, page 25.

<sup>3</sup> <http://www.armenpress.am>

<sup>4</sup> ՖՀՄՍ1, Ֆինան. հաշվետվությունների միջ. Ստանդարտների որդեգրումը, 13, 14, 15

Հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվային պլանի մշակում: ՖՀՄՍ-ների անցման ամսաթվի դրությամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվային պլանի մշակման խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք օգտվել գծապատկեր 2-ից




**Գծապատկեր 2.** Հաշվապահական հաշվառման քաղաքականության մշակում ՖՀՄՍ-ների անցման ամսաթվի դրությամբ<sup>5</sup>

Մի շարք խնդիրներ կապված ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը» ստանդարտի հետ: ՖՀՄՍ 1-ը պետք է կիրառեն ՖՀՄՍ-ներով իրենց առաջին ֆինանսական հաշվետվությունները պատրաստող կազմակերպությունները: ՖՀՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններն այն առաջին ֆինանսական հաշվետվություններն են, որոնցում կազմակերպությունը ընդունում է ՖՀՄՍ-ները և հաշվետվություններում կատարում դրանց համապա-

<sup>5</sup> Կազմվել է հեղինակի կողմից


տասխանության վերաբերյալ բացահայտ և անվերապահ հայտարարություն: Նույնիսկ եթե կազմակերպությունը նախկինում պատրաստել է ՖՅՄՍ-ներից լիովին համապատասխանող ֆինանսական հաշվետվություններ առանց այդ հաշվետվություններում ՖՅՄՍ-ներին համապատասխանության վերաբերյալ բացահայտ և անվերապահ հայտարարություն կատարելու, ապա այդ նախկին հաշվետվությունները չեն համարվի ՖՅՄՍ-ներին համապատասխանող, և նման կազմակերպությունը պետք է կիրառի ՖՅՄՍ 1-ը՝ ՖՅՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Եվ հակառակը, եթե կազմակերպությունը նախկինում պատրաստած իր՝ ՖՅՄՍ-ներից փաստացի չհամապատասխանող ֆինանսական հաշվետվություններում կատարել է ՖՅՄՍ-ներին համապատասխանելու մասին բացահայտ և անվերապահ հայտարարություն, ապա այդ կազմակերպության կողմից պատրաստվող հետագա ֆինանսական հաշվետվությունները չեն համարվի ՖՅՄՍ-ներով առաջին ֆինանսական հաշվետվություններ, և այդ կազմակերպությունը չպետք է կիրառի ՖՅՄՍ 1-ը<sup>6</sup>: Անհարժեշտ է թարգմանությունները կատարելիս ուշադրության առարկա դարձնել մատչելիությունն ու հասկանալի լինելը, որպեսզի սուղ ֆինանսական միջոցներ ունեցողները ստիպված չլինեն վճարել մասնագետների վերապատրաստման ծառայություններ մատուցողներին: ՖՅՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրումը» ստանդարտը պետք է իր մեջ ներառի նաև գործնական օրինակներ: Առաջարկները ներկայացված են գծապատկերով:



**Գծապատկեր 3. ՖՅՄՍ 1-ի բարելավման առաջարկություններ**

<sup>6</sup> <http://anaudit.am>

Առաջին ֆինանսական հաշվետվությունների կազմման հետ կապված մի շարք խնդիրների անդրադարձ: Առաջին ֆինանսական հաշվետվությունների կազմման հետ կապված մի շարք խնդիրները ներկայացնենք գծապատկեր 4-ի միջոցով




**Գծապատկեր 4.** Ընդհանուր խնդիրներ կապված առաջին ֆինանսական հաշվետվությունների հետ<sup>7</sup>

Կարևոր պահանջ է հաշվապահական գնահատումները հետընթաց չլիբառելը: ՖՅՄ-ներին անցնելու ամսաթվի դրությամբ, համաձայն ՖՅՄ-ների, կազմակերպության գնահատականները պետք է համահունչ լինեն նույն ամսաթվի դրությամբ նախկին ՀԸՀՄ-ի համաձայն կատարված գնահատականների հետ (հաշվապահական հաշվառման քաղաքականության տարբերությունների արտացոլման նպատակով կատարված ճշգրտումներից հետո), բացառությամբ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ այդ գնահատականները սխալ են եղել: Վերոնշյալը ներկայացնենք գծապատկեր 5-ի միջոցով: Ֆինանսական հաշվետվությունները ինքնանպատակ չեն: Դրանք կոչված են ներկայացնելու պատկերելու որոշակի տեղեկատվություն, իսկ թե ինչպիսի տեղեկատվություն, կախված է նրանից, թե ում է անհրաժեշտ այդ տեղեկատվությունը և ինչի համար: «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ կազմակերպության ֆինանսական վիճակի, գործունեության ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի փոփոխությունների վերաբերյալ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողներին ներկա և պոտենցիալ ներդրողներին, կառավարչական անձնակազմին և աշխատողներին, պետական

<sup>7</sup> Կազմվել է հեղինակի կողմից

մարմիններին, մատակարարներին և այլ կրեդիտորներին, փոխատուներին, հասարակությանը և ֆինանսական հաշվետվությունների այլ օգտագործողներին) անկողմնակալ տեղեկատվությամբ ապահովելը, որը նրանց անհրաժեշտ է տնտեսական որոշումներ կայացնելու համար:



**Գծապատկեր 5. ՖՀՄՍ 1-ի կիրառման հետ կապված գործնական խնդիրներ<sup>8</sup>**

Այսպիսով, ֆինանսական հաշվետվությունները տնտեսական որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությամբ են ապահովում օգտագործողների լայն խմբերի:

Որպեսզի ֆինանսական հաշվետվությունները ծառայեն իրենց նպատակին, այսինքն՝ դրանցում պարունակվող տեղեկատվությունը իսկապես օգտակար լինի, այն պետք է ունենա որոշակի որակական բնութագրեր: Իսկ որակական բնութագրերը այն հատկանիշներն են, որոնք տեղեկատվությունը դարձնում են օգտակար:

Կարելի է եզրահանգել, որ հայաստանյան գործարարները վաղ թե ուշ պետք է գիտակցեն բիզնեսի վարման միջազգային ստանդարտներին անցնելու անհրաժեշտությունը և ընդհանրապես բաց և թափանցիկ աշխատելու առավելությունները, իսկ այդ ճանապարհին էական դեր կարող է ունենալ ՖՀՄՍ-ների կիրառումը: Միայն այս պարագայում հայաստանյան ընկերությունները հնարավորություն կստանան ինտեգրվելու համաշխարհային բիզնես միջավայրին և գործակցելու արտասահմանյան ընկերությունների հետ հավասար դիրքերից:

<sup>8</sup> Կազմվել է հեղինակի կողմից

### **ԱՆԻ ՍԵՐՈԲՅԱՆ**

#### **Ֆինանսական հաշվառման կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրներ ՖՅՄՍ-ների անցման փուլում**

*Բանալի բառեր. ֆինանսական հաշվառում, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ (ՖՅՄՍ), հաշվային պլան*

Չողվածում քննարկված են ՖՅՄՍ-ների անցման փուլում առկա մի շարք խնդիրներ և այդ խնդիրների լուծումները: Քննարկվել է միջազգային ստանդարտներին անցնելու անհրաժեշտությունը և ընդհանրապես բաց ու թափանցիկ աշխատելու առավելությունները: Վերլուծված է ՖՅՄՍ-ների անցման առկա և սպասելիք բարեփոխումների ազդեցությունը ընկերությունների զարգացման վրա: ՖՅՄՍ-ների ճիշտ կիրառման պարագայում տեղական ընկերությունները կարող են ինտեգրվել համաշխարհային բիզնես միջավայրին և գործակցել արտասահմանյան ընկերությունների հետ հավասար դիրքերից:

### **Ani SEROBYAN**

#### **A NUMBER OF PROBLEMS WITH THE TRANSITION TO IFRS RELATING TO FINANCIAL ACCOUNTING ORGANIZATION**

*Keywords: financial accounting« International Financial Reporting Standard, accounting policy, chart of accounts*

The article discusses a number of problems and their solutions for the transition to IFRS. We discuss the need to move to international standards and the benefits of transparent work. We analyzed the expected impact of reforms on the development of the company's transition to IFRS. In the case of the correct application of IFRS Armenian companies can integrate into the global business environment« and to cooperate with foreign companies on equal positions.

### **Ани СЕРОБЯН**

#### **РЯД ПРОБЛЕМЫ С ПЕРЕХОДОМ НА МСФО СВЯЗАННЫХ С ФИНАНСОВЫЙ УЧЕТ ОРГАНИЗАЦИИ**

*Ключевые слова: финансовый учет, Международный стандарт финансовой отчетности, учетная бухгалтерская политика, план счетов*

В статье обсуждаются ряд проблем и их решения по переходу на МСФО. Обсуждались необходимость перехода на международные стандарты и преимущества открытой и прозрачной работы. Проанализированы ожидаемые влияния реформ на развитие компании с переходом на МСФО. В случае правильного применения МСФО армянские компании могут интегрироваться в глобальной бизнес-среде, и сотрудничать с иностранными компаниями на равных позициях.